Ալբերտ Ազարյան



Աշխարհի, Եվրոպայի առաջնությունների, Օլիմպիական խաղերի բազմակի չեմպիոն, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, միջազգային կարգի մրցավար, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի պատվավոր պրոֆեսոր: Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշ», «Փառքի նշան», ՀՀ «Մովսես Խորենացի» շքանշաններով:

Ծնվել է 1929թ. Գանձակում, արհեստավորի ընտանիքում:

1939թ. տեղափոխվել են Վանաձոր (նախկինում՝ Կիրովական), իսկ 1947թ.՝ Երևան:

1944թ. հոր մահից հետո աշխատել է դարբնի աշակերտ՝ զուգահեռ հաճախելով երեկոյան դպրոց:

1946 թվականից զբաղվել է սպորտով՝ ըմբշամարտով և ծանրամարտով:

1947թ. Մոսկվայում մասնակցել է ֆիզկուլտուրնիկների համամիութենական շքերթին:

1948-52թթ. սովորել և ավարտել է Հայկական ֆիզկուլտուրայի տեխնիկումը: Ուսմանը զուգահեռ, Սեմյոն Կարագյոզյանի ղեկավարությամբ զբաղվել է սպորտային մարմնամարզությամբ:

1952թ. առաջին անգամ դարձել է ԽՍՀՄ չեմպիոն օղակներից:

1953թ. ԽՍՀՄ հավաքականի կազմում մեկնել է միջազգային մրցումների Չինաստան, այնուհետև՝ Ֆրանսիա:

1954թ. ԽԱՀՄ հավաքականի կազմում մասնակցել է Իտալիայում աշխարհի առաջնության մրցումներին և դարձել աշխարհի չեմպիոն օղակներից:

1955թ. Արլ. Գերմանիայում մասնակցել է Եվրոպայի առաջնության մրցումներին և նվաճել երկու մեդալ՝ օղակներից և զուգափայտից:

1956թ. Ավստրալիայում դարձել է Օլիմպիական խաղերի չեմպիոն օղակներից:

1958թ. Մոսկվայում մասնակցել է աշխարհի առաջնության մրցումներին՝ նվաճելով աշխարհի չեմպիոնի կոչում՝ օղակներից:

1960թ. Իտալիայում դարձել է Օլիմպիական խաղերի չեմպիոն օղակներից:

1961թ. ԱՄՆ-ում մասնակցել է միջազգային մրցումների, որից հետո հանդես է եկել Կուբայում:

1963թ. մասնակցել է Ինդոնեզիայում Ասիական երկրների փոքր օլիմպիական խաղերին, որտեղ նվաճել է երկու ոսկե մեդալ՝ օղակներից ու պտտաձողից, և դարձել բացարձակ չեմպիոն:

Մասնակցել է մրցումների աշխարհի 49 պետություններում, նվաճել է 45 ոսկյա, 42 արծաթյա և 10 բրոնզե մեդալներ: ԽԱՀՄ առաջնություններում 11 անգամ արժանացել է չեմպիոնի կոչման:

1964 թվականին ավարտել է մարզական գործունեությունը՝ անցնելով աշխատանքի Երևանի քաղաքային ժողկրթության վարչության օլիմպիական հերթափոխի մարմնամարզության մասնագիտացված մարզադպրոցում որպես տնօրեն:

1964-2000թթ. եղել է Օլիմպիական խաղերի պատվավոր հյուր:

1956թ. ավարտել է ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը:

2000թ. նրան շնորհվել են «Երևան քաղաքի պատվավոր քաղաքացի» և «Լոռվա ասպետ» կոչումները: Երևանի քաղաքապետարանի ՕՀ մարմնամարզության մարզադպրոցն անվանակոչվել է նրա անվամբ:

2000թ. ճանաչվել է 20-րդ դարի Հայաստանի լավագույն մարզիկը:

ՀՀ Օլիմպիական կոմիտեի պատվավոր նախագահն է և ՀՀ մարմնամարզության ֆեդերացիայի նախագահը: